

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության հիմնական նպատակը՝ Ընկերության ողջ գործունեության շրջանակներում բնական գազի հուսալի, անխափան և անվտանգ գազամատակարարման ապահովման ընթացքում բարենպաստ շրջակա միջավայրի պահպանումն է:

Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում էներգետիկ ոլորտի առաջատար ընկերություններից է:

Լինելով աշխարհի խոշորագույն գազային և էներգետիկ ընկերություններից մեկի՝ «Գազպրոմ» ՀԲԸ 100% բաժնեմասային Ընկերություն, իր գործունեության շրջանակներում Ընկերությունն ունի հստակ և պատասխանատու վերաբերմունք ներկա և ապագա սերունդների համար բարենպաստ շրջակա միջավայրի ապահովման և պահպանման հարցում: Շրջակա միջավայրի պահպանության քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) Ընկերության պաշտոնական դիրքորոշումն է իր դերի և պարտավորության նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանել բարենպաստ շրջակա միջավայր, բնական պաշարների նպատակային օգտագործում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

-ՄՍ ԻՍՕ 14001:2015 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան շրջակա միջավայրի կառավարման համակարգերի կատարելագործման և արդյունավետ իրականացման ապահովում,

-Ընկերության գործունեության շրջանակներում շրջակա միջավայրի կառավարման համակարգերի պահանջների ապահովում,

- շրջակա միջավայրի պահպանություն Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի դրույթներին համապատասխան,

-վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների քանակների վերահսկում,

- թափոնների քանակների վերահսկում,

-ջրառի և կեղտաջրերի քանակների վերահսկում,

-շրջակա միջավայրի վրա ոչ բարենպաստ ազդեցությունները նվազեցնելու և դրանց հետևանքները վերացնելու նպատակով կանխարգելիչ գործողությունների և նախագծուշակա միջոցառումների իրականացում,

- էներգախնայողություն ապահովող տեխնոլոգիաների կիրառում:

ՆՇՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՄԱԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

-Միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան շրջակա միջավայրի կառավարման համակարգերին համապատասխանելիության ապահովում,

-շրջակա միջավայրի պահպանության կառավարման գործընթացի մասին Ընկերության համապատասխան աշխատողների իրազեկում՝ նպատակ ունենալով նրանց ներգրավվածությունը վերոնշյալ գործընթացում,

-Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների իրականացման ժամանակ շրջակա միջավայրի պահպանման նորմերի, ռիսկերի ու հնարավորությունների պարտադիր հաշվառում և գնահատում,

-շրջակա միջավայրի հսկողություն, մոնիթորինգ և գնահատում,

-ծառայությունների մատուցման տարբեր փուլերում էներգախնայողություն ապահովող տեխնոլոգիաների կիրառում,

-Ընկերության աշխատողների համար բարենպաստ աշխատանքային միջավայրի ստեղծում, որակավորման անընդհատ բարձրացում:

Ընկերությունը ստանձնում է շրջակա միջավայրի կառավարման համակարգերի քաղաքականության և նպատակների իրականացման համար անհրաժեշտ միջոցների տրամադրման, ելնելով իր մշակած Քաղաքականության դրույթներից՝ Ընկերության աշխատողներին, շահագրգիռ կողմերին սույն Քաղաքականության ծանոթացման, ինչպես նաև՝ շրջակա միջավայրի կառավարման համակարգերի ապահովման և բարելավման նպատակով աշխատանքների կազմակերպման ու կառավարման պարտավորություն:

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության շրջակա միջավայրի պահպանման քաղաքականությունը տարածվում է Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների, մասնաճյուղերի ու հիմնարկների վրա: